

ԷՆԴԻ ՀԻԼԿԵՆՍ

Գենտի համալսարանի Պատմության բաժանմունք,
Բելգիա

ՀԱԿՈՒ ՍՐՃԵՑՈՒ ՃԱՌԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Բանալի բառեր՝ Հայկական թարգմանական մատենագրություն, Ասորական գրականություն, Հակոբ Սրճեցի, Եփրեմ Ասորի, Ասորերենից թարգմանությունների Կիլիկյան շրջան, Վարդան Արևելցի, Գրիգոր Խլաթեցի, Հայսմավուրք, Ճառագրություն, Ժողովածուներ, պարզ տպագրություն, քննական բնագիր:

Ներածություն

Հայերեն թարգմանություններն ասորերենից

Թարգմանական գրականությունը ինչպես հայկական, այնպես էլ ցանկացած այլ մշակույթի անքակտելի մասն է¹: V-րդ դարում հայոց այբուբենի ստեղծումից ի վեր հայերը ոչ միայն զարգացրել են իրենց հարուստ մշակույթը՝ գեղեցիկ գրականություն ստեղծելով մայրենի լեզվով, այլև թարգմանել են տարբեր լեզուներով գրված երկեր, ինչպես օրինակ՝ հունարենից, արաբերենից, լատիներենից, ասորերենից²: Վերջինիս պարագայում կարելի է առանձնացնել

* Անգլերենից թարգմանեց Սոնա Բալոյանը: Գրականության հոդումները մեր մեջ ընդունվածից որոշ տարբերություն ունեն, բայց հարգել և պահել ենք հեղինակի սկզբունքը: Մեր մի ֆանի հավելյալ ծանոթագրությունները միայն աստղանիշով են՝ խմբ.:

¹ Սույն հոդվածն այս խնդրին վերաբերող իմ առաջին հրատարակության նորացված տարբերակն է՝ **Andy Hilkens**, “The Armenian Reception of the Homilies of Jacob of Serugh: New Findings,” in *Caught in Translation: Studies on Versions of Late Antique Christian Literature*, ed. **Madalina Toca and Dan Batovici**, Leiden: Brill, 2019, 64-84: Լրացումները առնված են հետևյալից՝ **Andy Hilkens**, “The Manuscripts of the Armenian Homilies of Jacob of Serugh: Preliminary Observations and Checklist,” *Manuscripta: A Journal for Manuscript Research* 64.1, 2020, p. 1-71: Մասնագիտական խորհրդատվության համար երախտագիտությունս եմ հայտնում էղվարդ Ջ. Մեթյուս կրտսերին և Բեռնար Ուտիեին: Հնարավոր սխալների պատասխանատուն ես եմ:

² Ձեռագրական հավաքածուների համար կիրառել ենք հետևյալ հապավումները՝ ՀԻՄ (Հայեպ, Քառասուն մանկանց եկեղեցի), ՊԱԳ (Պոլիս՝ Ղալաթիա, Հայոց ազգային գրադարան), Եղմ. (Երուսաղեմի Հայոց պատրիարքություն, Սրբոց Հակոբյանց վանք), ՄՄ (Մաշտոցյան Մատենադարան), ՆՋ (Նոր Զուղա՝ Սպահան, Սուրբ Ամենափրկիչ վանք), ՓՐգ. (Փա-

Թարգմանությունների երկու հիմնական փուլ՝ հնագույնը՝ V-րդ դարասկզբին հայոց գրերի ստեղծումից անմիջապես հետո, և Կիլիկյան շրջանը (ԺԱ.-ԺԳ. դարեր), երբ հայրենիքից Արևմուտք գաղթելուց հետո հայերը, մերձենալով ուղղափառ ասորիների հետ, սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել նրանց մշակութային և մատենագրական ժառանգության նկատմամբ³: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ Զ.-ից Ժ. դարերի ընթացքում ևս ասորերենից արվել են զգալի թվով Թարգմանություններ⁴:

Բավական գայթակղիչ է Դ. և Ե. դարերում գրված ասորերեն բնագրերի հայերեն Թարգմանությունները հայկական Թարգմանական շարժման հնագույն շրջանով թվագրելը, բայց միշտ չէ, որ դա համապատասխանում է իրականությանը: Որպես օրինակ կարելի է հիշել ճառերի, ներբողների, աղոթքների ու սուրբգրային մեկնությունների եփրեմ Ասորուն (306-373 թթ.) վերագրվող հայերեն Թարգմանությունները: Սրանց մի մասն ավելի ուշ է Թարգմանվել կամ

րիգ, Ֆրանսիայի ազգային գրադարան), Վնտկ. (Վենետիկ, Սուրբ Ղազար կղզի, Մխիթարյան միաբանության մայրավանք), Վիեն. (Վիեննայի Մխիթարյան վանք):

³ Թարգմանության փուլերի ընդհանուր բաժանման մասին տե՛ս Lévon Tér-Petrosyan, *Ancient Armenian Translations*, New York: Krikor and Clara Zohrab Information Center/St. Vartan Press, 1992: Հեղինակն անդրադարձել է հունարենից, լատիներենից և այլ լեզուներից, ինչպես օրինակ վրացերենն է, թարգմանություններին, սակայն ասորերենից թարգմանությունների վաղագույն և Կիլիկյան շրջանների մասին չի հիշատակում: [*Նշվածն անգլերեն թարգմանությունն է հետևյալ գրքույկի՝ Լ. Տեր-Պետրոսյան, *Հայ հին թարգմանական գրականություն*, Երևան, 1984: Տե՛ս նաև Լ. Տեր-Պետրոսյան, «Փորձ հայ հին և միջնադարյան գրականության պարբերացման», *Էջմիածին*, 1982, Դ., էջ 45-52՝ հմբ.]:

⁴ Edward G. Mathews Jr., “Syriac into Armenian: The Translations and their Translators,” *Journal of the Canadian Society for Syriac Studies* 10, 2010, p. 20-44: Մեթյուսի ցանկին պետք է ավելացնել ասորերեն գրված Արդ ալ-Մասիհի վարժի հայերեն տարբերակը, որի պատվիրատուն Վասպուրականի իշխան Գուրգեն Արծրունին էր՝ 873 թ.: Այս բնագրի մասին տե՛ս Gérard Garitte, “La passion géorgienne de saint ‘Abd el-Masih,” *Le Muséon* 79, 1966, p. 187-237 (at 187-88): Այս «միջին շրջանի թարգմանություններից» ոչ մեկը, սակայն, չի կարելի վերագրել այն վանքին, որի մասին Դիոնիսիոս Բար Սալիբին հայերի դեմ գրված իր երկում հաղորդում է, որ 726 թվականից անմիջապես հետո ասորի ուղղափառ պատրիարք Աթանաս Գ. (պաշտոնավարել է 724-740 թթ.) այն վերակազմակերպել է որպես պատանիների համար նախատեսված երկլեզու՝ ասորահայկական ուսումնարան և ասորական հայրաբանական գրականության հայերեն թարգմանությունների կենտրոն, տե՛ս Alphonse Mingana, *Woodbrooke Studies: Christian Documents in Syriac, Arabic, and Garshūni, Edited and Translated with a Critical Apparatus. Vol. 4: The Work of Dionysius Barsalibi against the Armenian*, Cambridge: W. Heffer & Sons, 1931, p. 55. Edward G. Mathews, Jr., *The Armenian Commentary on Genesis Attributed to Ephrem the Syrian* (CSCO 573) Leuven: Peeters, 1998, XLVIII-L: Այստեղ նա եզրակացնում է, որ այս վանքն այդ կարգավիճակով գործել է հավանաբար մինչև Հայոց Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի մահը (728 թ.), երբ, ըստ Դիոնիսիոսի՝ հայերը «խախտեցին իրենց պարտավորությունները և անարդարություններ գործեցին ասորի ուղղափառների հանդեպ»:

արվել ավելի ուշ գրված բնագրերից, որոնք անգամ եփրեմ Ասորու գրչին չեն պատկանում⁵: Այսպիսի դիտարկումներ կարելի է անել ուշ անտիկ շրջանի մեկ այլ մեծ ասորի բանաստեղծ-աստվածաբանի՝ Հակոբ Սրճեցու (մոտ 451-520/521 թթ.) մասին: Որևէ վկայություն չկա, թե Կիրիկյան շրջանից առաջ հայերը հետաքրքրություն են դրսևորել Հակոբի գրվածքների նկատմամբ⁶:

Հակոբ Սրճեցին և նրա երկերի հայերեն թարգմանությունները

Հակոբ Սրճեցին հայտնի էր իր ճարտասանական ձիրքով, որն արտահայտված է նրա արձակ կամ իր հորինած 12-վանկանի չափով գրված ճառերում⁷: Մինչև այժմ հայտնաբերվել է նրա գրչին վերագրվող ասորերեն 381 ճառ, որոնցից մի քանիսը կեղծ վերագրումներ են (*spuria*), իսկ մյուսների ծագումը կասկածելի է (*dubia*)⁸: Այդ վերագրումների կեսի հիմքում նրա մասին առկա վարքագրական ավանդություններն են⁹: Սակայն այս թիվը նույնիսկ չի ներառում արաբերեն, հայերեն և եթովպերեն բնագրերը, որոնք Հակոբի ճառերի թարգ-

⁵ Եփրեմի և Կեղծ-Եփրեմի հայերեն թարգմանությունների մասին տե՛ս **Edward G. Mathews, Jr.**, “The Armenian Literary Corpus Attributed to St. Ephrem the Syrian: Prolegomena to a Project,” *St. Nersess Theological Review* 1, 1996, 145-68, և նույնի՝ “Ephrem the Syrian: A Syriac Poet in Armenian Verse,” *Theological Librarianship* 5, 2012: p. 71-76: Կեղծ-Եփրեմի հայերեն աղոթքների մասին տե՛ս նույնի՝ “A First Glance at the Armenian Prayers attributed to Surb Ep‘rem Xorin Asorwoy,” in *Worship Traditions in Armenia and the Neighboring Christian East*, ed. **Roberta R. Ervine**, AVANT Treasures of the Armenian Christian Tradition 3, Crestwood: SVS Press, 2006, p. 161-73: Այժմ խմբագրված և թարգմանված է այստեղ՝ **Edward G. Mathews, Jr.**, *The Armenian Prayers attributed to Ephrem the Syrian* (Texts from Late Antiquity 36), Piscataway, New Jersey: Gorgias Press, 2014: Կեղծ-Եփրեմի Ծննդոց գրքի մեկնության հայերեն տարբերակի համար տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

⁶ **Edward G. Mathews, Jr.**, “Jacob of Serugh, *Homily on Good Friday* and other Armenian treasures: first glances,” in *Jacob of Serugh and his Times: Studies in Sixth-Century Syriac Christianity*, ed. **George A. Kiraz** (Gorgias Eastern Christian Studies 8), Piscataway, New Jersey: Gorgias Press, 2010, p. 161 (այսուհետև, շարադրանքի մեջ՝ Մերթյա):

⁷ **Sebastian P. Brock**, “Ya‘qub of Serugh,” in *Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage*, ed. **Sebastian P. Brock, Aaron M. Butts, George A. Kiraz and Lukas Van Rompay**, Piscataway, New Jersey: Gorgias Press, 2011, p. 433-35.

⁸ **Paul Bedjan and Sebastian Brock**, *Homilies of Mar Jacob of Sarug / Homiliae Selectae Mar-Jacobi Serughensis*, 6 vols., Piscataway, New Jersey: Gorgias Press, 2006, vol. 6, p. 372-99. Այս վեցերորդ հատորը պարունակում է այլ հառերի վերահրատարակություններ, ինչպես նաև նոր հրատարակություններ և սկզբնատողերի ու նյութերի ցանկեր:

⁹ **Jean-Baptiste Abbeloos**, *De vita et scriptis Sancti Jacobi Batnarum Sarugi in Mesopotamia Episcopi*, Leuven: Vanlinthout, 1867, p. 312-13; **Jean-Baptiste Abbeloos and Thomas J. Lamy**, *Gregorii Barhebraei Chronicon Ecclesiasticum*, 3 vols., Leuven: Peeters, 1872, vol. 1, p. 191; and the life summarized in **Arthur Vööbus**, “Eine unbekannte Biographie des Ja‘qōb von Serūg,” *Zeitschrift für Kirchengeschichte* 85, 1974, p. 399-405.

մանուկություններ են կամ համարվում են այդպիսիք¹⁰: Հակոբի և նրա գրվածքների նկատմամբ հետաքրքրությունը նրա բնագրերի՝ նաև Արևելքի մյուս քրիստոնյաների լեզուներով տարբերակների ուսումնասիրման ազդակ է դարձել, սակայն, դեռևս անելիք շատ կա:

Հակոբի և նրա գրվածքների հայերեն թարգմանությունների վերաբերյալ մեր գիտելիքները բավական սահմանափակ են, հիմնականում այն պատճառով, որ մինչև ԻԱ. դարի սկիզբ դրանցով հետաքրքրվել են միայն հայերը: Նրան վերագրվող ճառերի տասը հայերեն թարգմանությունների պարզ («գիպլոմատիկ») հրատարակություններն արդեն իսկ զետեղված են 1722 թ. լույս տեսած ճառերի և այլ գրվածքների ժողովածուի մեջ¹¹: 1889 թ.-ին Գարեգին վ. Զարբհանյանը հին հայերեն թարգմանությունների իր ցուցակում անդրադարձել է Հակոբի հայերեն թարգմանություններին՝ կազմելով տասներեք բնագրի ցանկ¹²: Մոտ 120 տարի անց միայն հայտնվեց այս թեմայով առաջին ոչ հայերեն ուսումնասիրությունը՝ Հակոբ Սրճեցուն և նրա ժամանակներին նվիրված մի հատորում¹³: Էդվարդ Մեթյուս կրտսերի ներդրումն այս հատորում կազմված է երկու մասից. ա.) համապատասխան բնագրերի ցուցակ, որը ներառում է ոչ միայն ճառեր, այլև Հակոբի՝ «Դանիել Գալաշացու վարքը»-ի¹⁴ հայերեն թարգմանությունը. և բ.) նրան վերագրվող՝ Ավագ Ուրբաթի մասին ճառի հայերեն տարբերակի անգլերեն մասնական թարգմանությունը (2.1)¹⁵: Ասված է, որ այս ճառի այժմ կորած ասորերեն բնագրի թարգմանությունն արել է Իսահակ անունով մի ասորի ուղղափառ քահանա՝ Գրիգոր անունով կաթողիկոսի պատվերով, որը,

¹⁰ Հայտնի է միայն մեկական՝ ղպտերեն և վրացերեն թարգմանություն. երկու ճառերի ասորերեն բնագրերը պահպանվել են, տե՛ս **Alin Suciu**, “The Sahidic version of Jacob of Serugh’s Memrā on the ascension of Christ,” *Le Muséon* 128, 2015, p. 49-83, և **Tamara Pataridze**, “La version géorgienne de l’homélie de Jacques de Saroug ‘Sur la Nativité’: étude et traduction,” *Le Muséon* 121, 2008, p. 373-402. Արաբական ավանդույթի մասին տե՛ս **Suciu**, “The Sahidic version,” 49, note 4, and **Aaron M. Butts**, “The Christian Arabic transmission of Jacob of Serugh (d. 521): the Sammlungen,” *Journal of the Canadian Society of Syriac Studies* 16, 2016, p. 39-59. On the Ethiopic tradition, see **Witold Witakowski**, “Jacob of Serug,” in *Encyclopaedia Aethiopica*. Vol. 3: *HE-N*, ed. **Siegbert Uhlig**, Wiesbaden: Harrassowitz, 2007, p. 262-63:

¹¹ Գիրք եւ ճառք հոգեշահ, Կ. Պոլիս, տպ. Սարգիս դպրի, 1722 (այսուհետև՝ *Գիրք եւ ճառ հոգեշահ*):

¹² Գ. վ. Զարբհանյան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 572-575* (այսուհետև՝ **Զարբհանյան**, *Մատենադարան*):

¹³ **Mathews**, “Jacob of Serugh”.

¹⁴ Հրատարակությունը տե՛ս Լ. Հ. Տեր-Պետրոսյան, «Յակոբայ Սրճեցոյ «Վարժ սրբոյն Դանիելի Գալաշացոյ»», Էջմիածին, 1979, Գ., էջ 22-40. որի մասին տե՛ս **Mathews**, “Jacob of Serugh”, p. 157; նույնի՝ “Syriac Into Armenian,” p. 31:

¹⁵ Այս հիշատակությունների համար տե՛ս հոդվածիս Հավելվածը: Ճառի անգլերեն թարգմանությունը տե՛ս **Edward G. Mathews, Jr.**, *Jacob of Sarug’s Additional Homilies on Good Friday, Texts from Christian Late Antiquity* 51, The Metrical Homilies of Mar Jacob of Sarug, Piscataway, New Jersey: Gorgias Press, 2018:

ենթադրաբար, Գրիգոր Գ. Պահլավունին է (1113-1166), և այն վերանայել է Ներսեսը, որն էլ, հավանաբար, նրա կրտսեր եղբայր և հաջորդ Ներսես Շնորհալին է (1166-1173)¹⁶:

Զարբհանալյանի նշած տասներեք բնագրերից Մեթյուսը չի անդրադարձել միայն մեկին՝ Հարությանը նվիրված ճառին, որը հավանաբար Հակոբինը չէ¹⁷: Ավելի կարևորն այն է, որ Մեթյուսն այս ցանկին ավելացրեց ևս վեց ճառ: Արդյունքը եղավ նախնական մի ցանկ՝ բաղկացած տասնյոթ ճառից, որոնցից տասը պահպանվել են ասորերենով, իսկ յոթը՝ ոչ: Սրանցից մի քանիսը, որոնց ասորերեն բնագիր չի գտնվել, դեռևս պետք է ուսումնասիրել՝ պարզելու համար, թե դրանց՝ Հակոբին վերագրված լինելը որքանով է հիմնավորված: Ճառերի բովանդակությունը թույլ է տալիս կարծել, որ դրանք իրոք Հակոբի գրչին են պատկանում, սակայն, նրանց լեզուն և թարգմանության պատմությունն ավելի մանրակրկիտ ուսումնասիրման կարիք ունեն: Ինձ արդեն հաջողվել է հաստատել, որ Քրիստոսի հարությունը նվիրված ճառը¹⁸ (= Մեթյուս 2.4) և մեկ ուրիշը՝ փղշտացիների ձեռքով Ուխտի տապանակի գերեվարվելու մասին¹⁹ (1.16 = Մեթյուս 2.5), իսկապես Հակոբի ճառերի թարգմանություններ են, որոնց ասորերեն բնագրերը պահպանվել են: Բացի այս տասնյոթ ճառերից, Մեթյուսը մատնանշել է մի քանի այլ բնագրերի առկայությունը մասին՝ ՆՋ 295 (ցուցակի Հ^մ 464) ձեռագրում, որն ընդօրինակվել է 1659 թվականին և որին մենք ստորև կանդրադառնանք²⁰:

¹⁶ Mathews, “Jacob of Serugh,” p. 136-50.

¹⁷ Գ. Զարբհանալեան, *Մատենադարան*, էջ 573: Ես ժե. դարի երկու ձեռագրում գտել եմ այս բնագրի երկու վկայություն. «Լուամ Աննայ և Կա(յ)իաբայ զաւետիս յարութեան Քրիստոսի ի զինուորացն» սկսվածով՝ Վիեն. 920, ք. 37ա-48ա և Վնտկ. 1447, ք. 462ա-465ա: Վերջինիս մասին տե՛ս Բ. Սարգիսեան, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Բ., Վենետիկ, 1924, էջ 381:

¹⁸ Ասորերեն բնագիրը տե՛ս Bedjan and Brock, *Homilies*, vol. 2, p. 624-35, հայերեն բնագիրը՝ Գիրք եւ ճառ հոգեշահ, էջ 258-288, Թ. Տասնապատեան, *Յիսուսի չարչարանքները (ճառերու հաւաքածոյ)*, Լիսաբոն, Գալուստ Կիւպէնկեան հաստատութիւն, 1999, էջ 403-417 (բնագիրը՝ ըստ ՀԻՔՄ 145, ժամանակն անհայտ):

¹⁹ Ասորերեն բնագիրը տե՛ս՝ Roger Akhrass and Imad Syriany, *160 Unpublished Homilies of Jacob of Serugh*, 2 vols., Damascus: Syriac Orthodox Patriarchate, 2017, vol. 1, p. 174-91, հայերեն բնագիրը տե՛ս՝ Գիրք եւ ճառ հոգեշահ, էջ 388-410: Մեթյուսը (Mathews, “Jacob of Serugh”, p. 158) նշում է, որ այս հաոը հիշատակված է Գ. Զարբհանալեան, *Մատենադարան*, էջ 575-ում, սակայն նրան շփոթեցրել է այս բնագրի մասին կիրառված «բանֆ» եզրը՝ «ճառ»-ի փոխարեն, ինչը սովորական է Հակոբի ճառերի համար (անկախ նրանից՝ դրանց սկզբնագիրը չափած է, թե արձակ):

²⁰ Այս ձեռագրի նկարագրությունը տե՛ս Ս. Տէր-Աւետիսեան, *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուգայի Ամենափրկիչ Վանքի*, հ. Ա., Վիեննա, Մխիթարեան տպ., 1970, էջ 729-730:

Ցանկի նորացում

Երկու ուղիով արված քննությունը թույլ տվեց ընդլայնել հայերեն ճառերի ցանկը. նախ՝ ՆՁ 295 (ցուցակի Հ^թ 464) ձեռագրի բովանդակությունը, ապա՝ առնչությունը եփրեմի հայերեն թարգմանությունների հետ²¹: Եփրեմի և Հակոբի հայերեն թարգմանություններն անքակտելի միահյուսված են. մեկն առանց մյուսի ուսումնասիրելն անհնար է: Մինչ օրս հայտնի է եփրեմին վերագրվող շուրջ հիսուն հայերեն ճառ: Այդ բոլորը չէ, որ վավերական են, այսինքն՝ եփրեմին են²². մի մասը թարգմանվել է ասորերենից, մյուսները՝ հունարենից²³, մեկը՝ նույնիսկ արաբերենից²⁴:

Այս բնագրերի մեծ մասը հրատարակվել է պարզ («գիպլոմատիկ») եղանակով, հիմնականում հայերեն ճառերի Կոստանդնուպոլսում 1722 թ. տպագրված ժողովածուում²⁵ և/կամ 1836 թ. Վենետիկում՝ հրատարակված «Սրբոյն եփրեմի Մատենագրութիւնք»-ի չորրորդ հատորում²⁶: Թեև սրանք օգտակար են, սակայն եփրեմի (և Հակոբի ճառերի) թարգմանությունների ուսումնասիրման համար կարող են վստահելի լինել միայն ձեռագրերի կարևոր վկայությունները հաշվի առնող քննական հրատարակությունները, ուստի այդ բնագրերը պետք է վերահրատարակել: Ավելին, որոշ բնագրեր դեռևս տպագրված չեն²⁷: Թեև ճիշտ չէ այն պնդումը, իբր «Հակոբի հայերենով պահպանված բոլոր ճառերը եփրեմի անունով են»²⁸, այդուհանդերձ, եփրեմն իսկապես կապված է Հակոբի

²¹ Suciu, “The Sahidic version,” 49, note 2.

²² Հակոբ Սրեեցու և Հովհաննես Մանդակունու որոշ ճառեր երբեմն հանդես են գալիս եփրեմի անվան տակ: Ավելին, մի շարք ձեռագրերում, այդ թվում՝ Վիեն. 219, ք. 507ա-512ա, պահպանվել է հայերեն մի՝ «Ճառ սրբոյն եփրեմի յաղագս դարձի ազգին Շանագլխոյ ի ձեռն Անդրէի առաքելոյ» (տե՛ս *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, Կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան՝ Մխիթ. ուխտէն, Վիեննա, տպ. Մխիթարյան, 1895, էջ 567, որի ասորերեն տարբերակը ևս թյուրիմացաբար վերագրվում է եփրեմին, տե՛ս Michel Van Esbroeck, “A ballad about Saint Andrew and the cannibals, attributed to Saint Ephraim,” *Hugoye* 2, 1999, 27-36:

²³ Maurice Geerard, *Clavis Patrum Graecorum 2: Ab Athanasio ad Chrysostomum*, Brepols: Turnhout, 1974, 3905-4175.

²⁴ Սուրբ Անդրեասի և մարդակերների մասին ճառը, հնարավոր է, հայերեն է թարգմանվել արաբերենից, որը կարող էր արտացոլել ասորական ավելի հին նախօրինակը, Van Esbroeck, “A ballad,” p. 27.

²⁵ *Փիրք եւ ճառ հոգեշահ*:

²⁶ Սրբոյն եփրեմի Մանենագրութիւնք, Կ. չորրորդ. Ճառք եւ աղօթք, Վենետիկ, Մխիթարեան տպ., 1836, 282 էջ:

²⁷ Maurice Geerard, *Clavis Patrum Graecorum 2: Ab Athanasio ad Chrysostomum*, 3915, 3946, 4014 և 4018 բնագրերի հայերեն տարբերակները՝ պահպանված ՄՄ 5115 և ՊԱԿ 54 ձեռագրերում:

²⁸ Suciu, “The Sahidic version,” 49, note 2.

ճառերի հայերեն առնվազն չորս թարգմանությունների հետ²⁹: Ստեփանոս Նախավկային (1.11³⁰) և Հիսուսի՝ Տաճարին ընծայմանը (1.14³¹) վերաբերող Հակոբի ճառերը հայերենով պահպանվել են միայն եփրեմի անվամբ՝ համապատասխանաբար առկա լինելով ԺԲ. (Փրգ. 110, 1194 թ.³²) և ԺԳ. դարերով (ՄՄ 995, էջեր՝ 540ա-9բ, 1278 թ.³³) թվագրվող ձեռագրերում: Ուստի զարմանալի չէ, որ այս երկու բնագրերն ընդգրկվել են «Սրբոյն եփրեմի Մատենագրութիւնք»-ի մեջ՝ հայկական ավանդույթյան մեջ եփրեմին վերագրվող տասնյակ այլ ճառերի և օրհներգությունների կողքին: Հակոբի մեկ այլ ճառ, որը հրատարակվել է եփրեմի անվան ներքո, Քրիստոսի ծննդյանը նվիրված ճառն է (1.10)³⁴: «Սրբոյն եփրեմի Մատենագրութիւնք»-ի մեջ սրա հրատարակվելն այս դեպքում հասկանալի է, քանի որ վկայությունների ճնշող մեծամասնությունն այս ճառը վերագրում է եփրեմին: Առ այսօր ինձ հայտնի քառասունյոթ վկայություններից հեղինակի ճիշտ անունը կա միայն երեքում՝ Վնտկ. 239, թ. 2ա-18բ³⁵ (1335 թ.),

²⁹ Հինգերորդը կարող է լինել Հովհաննես Մկրտչին վերաբերող մեկ այլ ճառ (Paul Peeters, *Bibliotheca Hagiographica Orientalis* (Brussels: Society of Bollandists, 1910, 487), Suciū, "The Sahidic version," 49, note 2 (և ըստ Բեռնար Ուտիեի հետ մասնավոր գրույցի):

³⁰ Արդեն իսկ նշվել է Suciū, "The Sahidic version," 49, note 2: Ասորերեն բնագիրը տե՛ս Bedjan and Brock, *Homilies*, vol. 3, p. 710-23, հայերեն բնագիրը տե՛ս Ճառք եւ աղօթք, էջ 143-149:

³¹ Այս ճառի ասորերեն բնագիրը տպագրվել է P. Bedjan and S. Brock, *Homilies*, 2006, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ե.՝ Յալսմատուրք-Գանձարան-Տաղարան-Տոնացոյց, Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1995, էջ 447-66: Հայերեն տարբերակը տե՛ս Գիրք եւ ճառ հոգեշահ, էջ 47-65 և Ճառք եւ աղօթք, էջ 35-44:

³² Raymond H. Kévorkian, Armèn Tér-Stépanian, Bernard Outtier and Guévorg Ter-Vardanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France*, Paris: Bibliothèque nationale de France, 1998, p. 335-36. Հին նկարագրությունը Frédéric Macler, *Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque nationale*, Paris: Ernest Leroux, 1908, p. 48-54, կարելի է օգտագործել, հաշվի առնելով հետևյալ հոդվածը՝ Joseph Muyldermans, "Note sur le Parisinus arménien 110," *REArm.* 1, 1964, p. 101-20:

³³ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Ա. Քեօշկերեան, Կ. Սուփասեան, Յ. Քէօսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, հ. Դ., Երևան, Նաիրի, 2008, էջ 1731-1740 (նառի մասին էջ 1737):

³⁴ Ճառք եւ աղօթք, էջ 9-13: Այս ճառն արդեն իսկ ընգրկված է Զարեհանայանի և Մեթյուսի ցանկերում (1.10): Ասորերեն բնագրի հրատարակությունը տե՛ս Paul Bedjan, *S. Martyrii, qui est Sahdona, quae supersunt omnia*, Leipzig: Harrassowitz, 1902, p. 720-74 (վերահրատարակված Bedjan and Brock, *Homilies*, vol. 6, p. 108-62): Եփրեմին վերագրվող ենթադրաբար Ավետմանը վերաբերող երկու ճառերի, որոնք իրականում Քրիստոսի Ծննդյանը վերաբերող (1.10) Հակոբի ճառի մասերն են, հրատարակությունը տե՛ս Թ. Տասնէպատեան, Տիրամայր. Գրիգոր Նարեկացիէն նոր բնագիր մը. Անտիպ բնագիրներ՝ Հայ եկեղեցիի իշխանութեան եւ աստուածաբաններու կողմէ գրուած եւ թարգմանուած, Լիպզոն, Գալուստ Կիլիկիէն կեան հիմնարկութիւն, 1998, էջ 58-69:

³⁵ Նկարագրությունը Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ, հ. Բ., էջ 325:

ՄՄ 824, թ. 2ա-35ա³⁶ (ԺԳ. դար), և ԺԷ. դարի մի ձեռագիր, որը ԺԹ. դարի վերջին եղել է հաշիկ վ. Դադյանի հավաքածուում³⁷: Չորրորդ վկայությունը՝ ՄՄ 943, թ. 210ա-6ա (ԺԸ. դար), վերագրում է Հովհան Ոսկեբերանին³⁸: ՄՄ 2784 ձեռագիրը (ԺԳ. դար) եփրեմին սխալ վերագրումով հնագույն վկայությունն է, որը Վնտկ. 239-ին նախորդում է առնվազն երեսունհինգ տարով³⁹:

Նմանապես, Ծաղկազարդին նվիրված⁴⁰ Հակոբի ճառի թարգմանությունը վերաբերող տասնմեկ վկայություններից, որոնք Հակոբի ցանկի նոր լրացում են, հնագույն երեքն այն վերագրում են եփրեմին՝ ՄՄ 995, թ. 480ա-492ա⁴¹ (1278 թ.), ՄՄ 2756, թ. 3բ-11բ⁴² (ԺԳ. դար), Փրզ. 116, թ. 233ա-235բ⁴³ (1307 թ.), և իրավացիորեն Հակոբին վերագրումը պահպանել են միայն ավելի նոր ձեռագրերը, որոնք ներկայացնում են միայն աղերս-աղոթքը, որով Հակոբը սկսում էր իր չափածո ճառերը. ՄՄ 745, թ. 108բ-109ա (1607 թ.)⁴⁴, ՆՁ 295 (ցուցակի Հ^մ 464), թ. 39բ-40բ⁴⁵ (1659 թ.), ՄՄ 2291, թ. 116աբ⁴⁶ (1665 թ.), եղմ. 1499, թ. 17-19 և 138-139 (ԺԷ. դ. - ԺԸ. դարի սկիզբ)⁴⁷, և ՄՄ 2121, թ. 376բ-377ա (1726

³⁶ Նկարագրություն՝ **Օ. Եգանեան**, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*. հ. Գ., Երևան, Մազադաթ հրատ., 2007, 865-72 (Ծննդյան հառը տե՛ս էջ 866): Այս ձեռագրում հառը փաստորեն վերագրվում է միայն Հակոբին, որի «Սրեեցի» մականունը չի նշվում:

³⁷ Նկարագրված է՝ **Յ. Յ. Թօփեան**, *Յուցակ ձեռագրաց Դադեան Խաշիկ վարդապետի ժողոված 1878-1898*, Մասն Ա., 1878-1898, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1898, էջ 87, ձեռ. Հ^մ 71, 50ա-102բ: Կա երկու այլ ձեռագիր ևս, որոնցում այս հառը կարծես Հակոբին է վերագրվում, բայց ես դեռևս դրանք ուսումնասիրելու հնարավորություն չեմ ունեցել՝ ՄՄ 3839 (ԺԳ. դար) և ՄՄ 9018 (ԺԶ. դար):

³⁸ **Եգանեան**, *Մայր ցուցակ*, հտ. Գ., էջ 1355-63 (1361):

³⁹ **Գ. Տէր-Վարդանեան**, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*. հ. Թ., Երևան, Նայիրի, 2017, էջ 558:

⁴⁰ Այս հառի ասորերեն բնագիրը տե՛ս **Bedjan and Brock**, *Homilies*, vol. 1, p. 445-59: Անգլերեն թարգմանությամբ վերահրատարակությունը տե՛ս **Jacob Kollamparampil**, *Jacob of Sarug's Homily on Palm Sunday* (Texts from Late Antiquity 5), Piscataway, New Jersey: Gorgias Press, 2008:

⁴¹ **Օ. Եգանեան**, *Մայր ցուցակ*, հ. Գ., էջ 1736:

⁴² **Գ. Տէր-Վարդանեան**, *Մայր ցուցակ*, հ. Թ., էջ 372:

⁴³ **Kévorkian et al.**, *Manuscripts arméniens*, p. 399.

⁴⁴ **Օ. Եգանեան**, *Մայր ցուցակ*, հ. Գ.:

⁴⁵ **Գ. Տէր-Աւետիսեան**, *Յուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի*, էջ 729:

⁴⁶ **Գ. Տէր-Վարդանեան**, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*. հ. Է., Երևան, Նայիրի հրատ., 2011, էջ 816:

⁴⁷ **Ն. Էսյս**, **Պողոսեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հտ. Ե., Երուսաղեմ, Սուրբ Յակոբեանց տպ., 1971, էջ 235-236: Այս նկարագրության մեջ բացակայում են մեծ թվով բնագրեր, իմ նոր նկարագրությունը հրատարակվելու է այստեղ՝ **A. Hilken**, “‘Beautiful little

թ.)⁴⁸։ Ըստ այսմ՝ այդ թարգմանությունը ենթադրաբար արվել է 1278 թվականից շատ ավելի շուտ ու հետագայում է սխալմամբ վերագրվել Եփրեմին։ Այս դեպքում իրական հեղինակի շփոթումը կարող էր առաջանալ գոյություն պատճառով նույն խնդրին վերաբերող այլ ճառերի, որոնք կարող էին լինել Եփրեմի ճառերի թարգմանությունը⁴⁹։ Այլ խոսքով՝ այս սխալ վերագրումը շտկվել է շատ ավելի ուշ։

Ծաղկազարդին (1.13) նվիրված Հակոբի ճառի հայերեն թարգմանության օրինակը ցույց է տալիս ուշ շրջանի ձեռագրերի կարևորությունը՝ անգամ շատ ավելի հին ձեռագրերի առկայության պարագայում։ Եփրեմի և Հակոբի ճառերի հայերեն թարգմանությունների ամենածավալուն ժողովածուներից մի քանիսը ժէ. դարի ձեռագրեր են, օրինակ՝ ՄՄ 745, Եղմ. 1499, ՆՁ 295 (ցուցակի Հ^մ 464) և ՄՄ 2291, որոնցում պահպանված չեն ամբողջական ճառերը, այլ միայն աղոթքները։ Թարգմանություններից մեկը՝ Հակոբի «Հինգ քանքարի մասին» ճառը (1.12) (ցանկի մի այլ լրացում), հայտնի է միայն այս ժողովածուներից, որ նշանակում է, թե հայերենով պահպանվել է միայն աղոթքի հատվածը⁵⁰։

Հնագույն ձեռագրերը

Ընդգծելով համեմատաբար ուշ շրջանի ձեռագրերի կարևորությունը, թույլ տվեք այս պահին կենտրոնանալ այդ բնագրերը պարունակող հնագույն ձեռագրերի վրա։ Մինչ այժմ ես բացահայտել եմ շուրջ 250 ձեռագիր՝ ոչ միայն քարոզարձար, ժողովածուներ և հավաքածուներ, այլև Գրիգոր Խլաթեցու (1349-1425) Հայսմավուրքը։ Մոտ 1401 թվականին Գրիգոր Խլաթեցին իր աշխատության մեջ ներառեց Հակոբի վարքը և Հակոբի ճառերը՝ նվիրված Ստեփանոս Նախավկային (վերագրվում է Եփրեմին) (1.11), Նոր Կիրակիին (Կրկնազատիկ) և Թովմաս առաքյալին (1.7)։ Այս ձեռագրերի շարքում նույնիսկ նկատի չի առնվում բովանդակությունը Մաշտոցյան Մատենադարանի 59 ձեռագրերի, որոնք դեռևս մանրամասն նկարագրված չեն, բայց պարունակում են Հակոբին վե-

gems in their own right': the circulation of Jacob of Serugh's invocational prayers in Armenian", որն այդ ժողովածուների ֆնոտիպումն է։

⁴⁸ Գ. Տէր-Վարդանեան, *Մայր ցուցակ*, հ. է., էջ 101-12։

⁴⁹ Օրինակ Մաղկազարդի մասին ճառը՝ «Ի տօնս տօնից լի ընտրողութեամբ» սկսվածով՝ Գիրք եւ ճառ հոգեշահ, էջ 144-70 և Ճառք եւ աղօթք, էջ 45-60։

⁵⁰ Andy Hilken, "The Armenian translation of Jacob of Serugh's Memra on the Five Talents," *Le Muséon* 133: 3-4, 2020, p. 345-95. Այս հոդվածում նշված ձեռագրերին այժմ պետք է ավելացվեն ևս մի քանիսը, որոնք ներկայացվելու են այստեղ՝ Hilken, "Beautiful little gems in their own right": Այս ճառի ասորերեն տպագիրը տե՛ս Bedjan and Brock, *Homilies*, vol. 5, p. 587-613։

րագրվող ճառեր⁵¹: Հնագույններից են հատկապես ՄՄ 3782 (ԺԲ. դար), ՄՄ 3779 (1227 թ.) և ՄՄ 4871 (ԺԳ. դար) ձեռագրերը:

Ձեռագրական ավանդույթն ընդգրկում է XV-րդից մինչև XX-րդ դարը: Եթե նկատի առնվեն նաև Մատենադարանի 59 ձեռագրերը (բայց Գրիգորի Հայսմավուրքը պարունակող ոչ բոլոր ձեռագրերը), կտեսնենք, որ այդ ձեռագրերի մեծ մասը թվագրվում է ԺԵ. դարով, իսկ մյուսները՝ ԺԵ. և ԺԸ. դարերով: Շատ կարևոր է, որ ԺԲ. և ԺԳ. դարերից պահպանվել է 14 ձեռագիր. ԺԲ. դարից՝ երեքը, որոնցից մեկը թվագրվում է 1194 թվականով, իսկ ԺԳ. դարից՝ ութը, որոնցից չորսը վերաբերում են 1215, 1227, 1251-1288 և 1278 թվականներին: Կա ևս մեկ ձեռագիր, որն անհնար է ավելի որոշակի թվագրել. միայն կարող ենք ասել, որ այն ԺԲ. կամ ԺԳ. դարի է: Ստորև ես նկարագրում եմ այս տասնչորս ձեռագրերից տասնմեկի՝ Սրճեցուն վերաբերող մասերի բովանդակությունը, անտեսելով Վնտկ. Հ^մ 41 և Վնտկ. Հ^մ 526 ձեռագրերը, որոնք կարող են գրված լինել հավասարապես թե՛ ԺԳ. և թե՛ ԺԴ. դարերում: Ավելին, քանի որ ՄՄ 3782, ՄՄ 3779 և ՄՄ 4871 ձեռագրերը դեռևս մանրամասն նկարագրված չեն, և ես դեռ դրանք ուսումնասիրելու հնարավորություն չեմ ունեցել, հետևաբար և չեմ կարող որևէ տեղեկություն տալ նրանց բովանդակության մասին, բացի այն փաստից, որ նրանք իսկապես պարունակում են Հակոբին վերագրվող ճառեր: Հուսով եմ՝ մոտ ապագայում հնարավորություն կունենամ Մատենադարանում ուսումնասիրելու այդ ձեռագրերը և պարզելու նրանց բովանդակությունը:

1. Փրգ. 110⁵² (օրինակվել է նդկովում՝ Տիւիկ, 1194 թ.).
- Նոր Կիրակիի և Թովմաս առաքյալի մասին ճառը (1.7)* – 418ա-23ա՝ Նորին [Սրբոյն Յակովբայ Սրնոյ եպիսկոպոսի] ի Նոր Կիրակէն եւ ի սուրբ առաքեալն Թովմաս,
- Տիրոջ Հարության և գերեզմանը հսկող զինվորների մասին ճառը (1.15) – 410բ-18ա՝ Սրբոյն Յակովբայ Սրնոյ երիսկոպոսի՝ Ի Յարութիւնն Տեառն եւ ի զինուորսն, որ պահեին զգերեզմանն,

⁵¹ Hilken, “The Manuscript of the Armenian Homilies of Jacob of Serugh,” p. 65-67. Այդ ձեռագրերը շատ համառոտ նկարագրված են՝ *Յուդակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*. Բ. Ա., Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ներածութիւնը՝ Օ. Եգանեանի, Խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1965, 1636 սիւն, հատոր Բ., Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Յանկերը եւ համեմատական տախտակները՝ Օ. Եգանեանի, խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երևան, 1970, 1548 սիւն:

⁵² Kévorkian et al., *Manuscripts arméniens*, p. 345, 352, 335-6.

* Այս ցանկի պայմանական համարներին՝ (1.7) եւն, յաջորդող ձեռագրական էջահամարները եւ խորագրերը մեր յաւելումներն են՝ իմք.:

- Անտիոք ֆաղափ դարձի մասին հառը (1.17) – 589ա-595բ՝ Խաւսֆ սրբոյն Յակովբայ Սրնոյ եպիսկոպոսի Յաղագս Անտիոքա, թէ որպէս եղեն աշակերտեալ յառաքելոցն,
- Հիսուսի՝ Տաճարին ընծայման մասին հառը (1.14) – 162բ-6ա Երանելոյն Եփրեմի ասացեալ ի գալուստ Տեառն փառասնաւրեա ի տաճարն,
- 2. ՄՄ 1522⁵³ (ԺԲ. դար).
- Փառաբանում Հովհաննէս Մկրտչին (1.6) – 512բ-8ա՝ Երանելոյն Յակովբայ Սրնոյ եպիսկոպոսի Բան] դրուա[տ] ի Յովհաննէս Մկրտիչ եւ Կարապետի Քրիստոսի,
- Տիրոջ Հարուստան եւ գերեզմանը հսկող զինվորների մասին հառը (1.15) – 538ա-46բ՝ Սրբոյն Յակովբայ ի Յարութիւն Տեառն եւ ի զինուորսն որք պահէին զգերեզմանն նորա,
- 3. Վնակ. 1554⁵⁴ (ԺԲ. դար).
- Տիրամոր ննջման մասին հառը (1.8) – 150բ-61ա՝ Երանելոյն Յակովբայ Սրնոյ եպիսկոպոսի՝ Ներբողեան ասացեալ ի ննջումն սրբոյ Աստուածածնին եւ միշտ կուսին Մարիամա,
- 4. Վնակ. 1014⁵⁵ (ԺԲ. կամ ԺԳ. դար).
- Տիրոջ Հարուստան եւ գերեզմանը հսկող զինվորների մասին հառը (1.15) – 105ա-14բ՝ Երանելոյն Յակովբայ Սրնոյ եպիսկոպոսի ասացեալ ի Յարութիւն Տեառն եւ ի զինուորսն,
- Մեկնություն Մեր Փրկչի Հարուստան մասին հառը (1.1) – 114բ-9բ՝ Նորին սրբոյն Յակովբայ Սրնեցոյ Ներբողեան ասացեալ ի սուրբ Զատիկն եւ Յարութիւն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ Աստուծոյ,
- Նոր Կիրակիի եւ Թովմաս առաքյալի մասին հառը (1.7) – 227ա-33ա՝ Սրբոյն Յակովբայ ի Նոր Կիրակէն եւ ի սուրբ առաքեալն Թովմաս,
- Մեր Աստուծո՝ Քրիստոսի ծննդյան մասին հառը (1.10) – 407ա-16ա՝ Սրբոյն արքայ Եփրեմի Ներբողեան ասացեալ ի Ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ,
- Հիսուսի՝ Տաճարին ընծայման մասին հառը (1.14) – 92ա-7ա՝ Սրբոյն Եփրեմի Խորին Աստուծոյ ի գալուստն Տեառի ի տաճարն փառասնաւրեալ,
- 5. Վնակ. 1553⁵⁶ (1215 թ.).

⁵³ Օ. Եգանեան, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*, հ. Ե., Երևան, 2009, էջ 250-51 (239-256):

⁵⁴ Բ. Սարգիսեան, *Մայր ցուցակ*, հտ. Բ., էջ 153 (145-156):

⁵⁵ Նույն տեղում, էջ 42, 49, 57, 42 (35-66):

⁵⁶ Նույն տեղում, էջ 139 (133-146):

- Անտիոֆ ֆաղաֆի դարձի մասին նաոը (1.17) – 248ա-65բ՝ Խաւսֆ սրբոյն Յակոբբայ Սրնոյ եպիսկոպոսին Յաղագս Անտիոֆայ ֆաղաֆին, թէ որպէս մտին սուրբ առաքեալն աշակերտելով զնա,
- Հովհաննէս Մկրտչին նվիրված նաոը⁵⁷ (2.7) – 238բ-43ա՝ Երանելոյն աբբա Եփրեմի Խորին Ասորու ասացեալ ի սուրբն Յովհաննէս Մկրտչին Քրիստոսի եւ ի կախաւումն դստերն Հերովդիասայ,
- 6. Վնակ. 17* (1224 թ.).
- Հովհաննէս Մկրտչին նվիրված նաոը (2.5) – 348ա-52բ՝ Երանելոյն Եփրեմի Խորին Ասորոյ ասացեալ Ներբողեան ի սուրբն Յովհաննէս Կարապետ եւ Մկրտչի Քրիստոսի եւ ի կախաւումն Հերովդիադայ, թարգմանեալ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի,
- 7. Վնակ. 1002⁵⁸ (1251-1288 թթ.).
- Տիրոջ Հարոյթյան եւ գերեզմանը հսկող զինվորների մասին նաոը (1.15) – 140բ-52ա՝ Սրբոյն Յակոբբայ Սրնոյ եպիսկոպոսի՝ Ի Յարութիւնն Տեառն եւ ի զինուորսն, որք պահեին զգերեզմանն նորա – էջ 169,
- Նոր Կիրակիի եւ Թովմաս առաքյալի մասին նաոը (1.7) – 152ա-9բ՝ - Նորին սրբոյն Յակոբբա Սրնոյ եպիսկոպոսի ի Նոր Կիրակէն եւ ի սուրբ առաքեալն Թովմաս,
- 8. ՄՄ 995⁵⁹ (1278 թթ.).
- Անտիոֆ ֆաղաֆի դարձի մասին նաոը (1.17) – 253բ-77ա՝ Խաւսֆ սրբոյն Յակոբբա Սրնոյ եպիսկոպոսի Յաղագս Անտիոֆ ֆաղաֆի, թէ որպէս մտին առաքեալն՝ աշակերտել զնոսայ,
- Ավագ ուրբաթի մասին նաոը (2.1) – 329ա-51ա՝ Սրբոյն Յակոբբա Սրնեցոյ եպիսկոպոսի ասացեալ ի շարշարանս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յիններորդ ժամու աւագակն, որ հրաւիրեցաւ ի դրախտն, եւ Բեռքէն, որ պահէր զնանապարհն,
- Տիրոջ Հարոյթյան եւ գերեզմանը հսկող զինվորների մասին նաոը (1.15) – 505ա-28բ՝ Նորին սրբոյն Յակոբբայ Սրնոյ եպիսկոպոսի ասացեալ Ներբողէն ի Յարութեան Տեառն եւ ի զինուորսն, որք պահեին զգերեզմանն Փրկչին,

⁵⁷ Հայկական ավանդույթով Եփրեմին է վերագրվում ոչ թէ Հովհաննէս Մկրտչի մասին նաոը, այլ այն մեկը, որի ասորերեն բնագիրը չի պահպանվել: Այդուհանդերձ, լեզուն ենթադրել է տալիս, որ դա Հակոբի նաոն է (ըստ Բեռնար Ուտիեի հետ մասնավոր զրոյցի):

* Բ. Սարգիսեան, *Մայր ցուցակ*, հ. Բ., էջ 22:

⁵⁸ Բ. Սարգիսեան, *Մայր ցուցակ*, հ. Բ., էջ 169-70 (165-176):

⁵⁹ Օ. Եզանեան, *Մայր ցուցակ*, հ. Գ, էջ 1735-7 (1731-1740):

- Տիրամոր ննջման մասին հառը (1.8) – 469ա-80ա՝ երանելոյն Յակոբայ Սրնոյ եպիսկոպոսի ասացեալ ներբողեան ի ննջումն սրբոյ Աստուածածնին եւ միշտ կուսին Մարիամու,
- Ծաղկազարդի մասին հառը (1.13) – 480ա-92ա՝ Տեառն եփրեմի Ի - գալուստ Փրկչին յերուսաղէմ ասացեալ,
- Ստեփանոս Նախավկայի մասին հառը (1.11) – 540ա-9բ՝ երանելոյն սրբոյ եփրեմի հորին Ասորոյ ներբողեան ասացեալ ի սուրբն Ստեփաննոս Նախավկայն Քրիստոսի,
- 9. ՄՄ 2756⁶⁰ (ԺԳ. դար).
 - Ղազարոսի հարության մասին հառը (1.2) – 1ա-3բ՝ Ժէ. երանելոյն Յակովբայ Սրնեոյ եպիսկոպոսի ի յարութիւնն Ղազարու ասացեալ ներբողեան,
 - Ծաղկազարդի մասին հառը (1.13) – 3բ-11բ՝ երանելոյն աբբայ եփրեմի հորին Ասորոյ՝ ներբողեան ասացեալ ի գալուստ փրկչին յերուսաղէմ,
 - Տիրամոր ննջման մասին հառը (1.8) – 74բ-81ա՝ Սրբոյն Յակովբայ Սրնեցոյ ասացեալ ճառ ներբողեան ի ննջումն Սրբոյ Աստուածածնին եւ միշտ կուսին Մարիամու,
- 10. ՄՄ 2784⁶¹ (ԺԳ. դար).
 - Մեր Աստծո՝ Քրիստոսի ծննդյան մասին հառը (1.10) – 6բ-32ա՝ երանելոյն աբբայ եփրեմի ներբողեան ասացեալ ի ծնունդն Քրիստոսի,
 - Ղազարոսի հարության մասին հառը (1.2) – 154բ-60բ՝ երանելոյն Յակովբայ, Սրնեոյ եպիսկոպոսի ի յարութիւնն Ղազարու ասացեալ ներբողեան,
- 11. Վնտկ. 985⁶² (ԺԳ. դար).
 - Ավագ ուրբաթի մասին հառը (2.1) – 66բ-78բ՝ Սրբոյն Յակոբայ Սրնոյ եպիսկոպոսի ասացեալ՝ Մեծի ուրբաթին չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յիններորդ ժամուն (յ)որ հրափրեցաւ աւազակն ի դրախտ, եւ ի ֆերոբէն, որ պահէր զհանապարհս ծառոյն կենաց,
 - Ստեփանոս Նախավկայի մասին հառը (1.11) – 158բ-62ա՝ երանելոյն եփրեմի հորին Ասորոյ Ի սուրբն Ստեփաննոս Նախավկայն,
- 12. Փրգ. 115⁶³ (Հայաստանի հյուսիսային շրջաններ, ԺԳ. դար).

⁶⁰ Գ. Տէր-Վարդանեան, *Մայր ցուցակ*, հ. Թ., էջ 371-3:

⁶¹ Գ. Տէր-Վարդանեան, *Մայր ցուցակ*, հ. Թ., էջ 558, 560 (557-562):

⁶² Բ. Սարգիսեան, *Մայր ցուցակ*, հ. Բ., էջ 117-8, 122 (117-118):

⁶³ Kévorkian et al., *Manuscripts arméniens*, p. 384.

- Հիսուսի՝ Տաճարին ընծայման մասին ճառը (1.14): — 123ա-6բ՝ Սրբոյն Եփրեմի [Խորին Ասորոյ ասացեալ Յաղագս] գալստեան Տեառն Բառասնաւեա ի տաճարն:

ԺԲ. կամ ԺԳ. դարերի ձեռագրերում մեզ են հասել Հակոբին վերագրվող տասներեք հայերեն ճառ և/կամ թարգմանություն: Ամենահաճախադեպը Տիրոջ Հարություն և գերեզմանը հսկող զինվորների մասին ճառն է (1.15), որն առկա է ԺԲ. և ԺԳ. դարերի տասնմեկ ձեռագրերից հինգում: Հետևյալ չորս ճառերից յուրաքանչյուրը հանդիպում է երեքական անգամ՝ նոր Կիրակիին և Թովմաս առաքյալին (1.7), Տիրամոր նշմանը (1.8), Հիսուսի՝ Տաճարին ընծայմանը (1.14), Անտիոք քաղաքի դարձին (1.17) վերաբերող ճառերը: Իսկ Ղազարոսի հարությունը (1.2), Մեր Աստծո՝ Քրիստոսի ծննդյանը (1.10), Ստեփանոս նախավկային (1.11), Ծաղկազարդին (1.13), Ավագ Ուրբաթին (2.1) և Հովհաննես Մկրտչին (2.5) նվիրված ճառերից յուրաքանչյուրը հանդիպում է երկու անգամ: Հովհաննես Մկրտչի մասին մեկ այլ ճառ (1.6⁶⁴), նաև՝ Մեկնություն Մեր Փրկչի Հարության մասին ճառը (1.1) այս հին ձեռագրերում հանդիպում են միայն մեկական անգամ:

Այս ձեռագրերը տալիս են իրենց մեջ պահպանված տասներեք թարգմանությունների ամենաուշ ժամանակային սահմանը (*terminus ante quem*): Տասներեքից վեցը պետք է թարգմանված լինեն ամենաուշը ԺԲ. դարում՝ ելնելով այն փաստից, որ դրանք արդեն իսկ առկա են ԺԲ. դարի ձեռագրերում: Հովհաննես Մկրտչին նվիրված ճառը (2.5), որն ըստ հիշատակարանի թվագրվում է Գրիգոր Բ. Վկայասերի կաթողիկոսության տարիներով (1066-1105 թթ.), պահպանվել է 1215 թվականի մի ձեռագրում: Ավագ Ուրբաթին նվիրված ճառը (2.1) նույնպես հանդիպում է ԺԳ. դարի երկու ձեռագրում, սակայն, ըստ հիշատակարանի՝ դրանք գրվել են Գրիգոր Գ. Պահլավունու կաթողիկոսության տարիներին (1113-1166 թթ.)⁶⁵:

- Հովհաննես Մկրտչին նվիրված ճառը (2.5, 1066-1105 թթ.-ի միջակայքում),
- Ավագ Ուրբաթի մասին ճառը (2.1, հավանաբար 1113-1166 թթ.-ի միջակայքում),

⁶⁴ Ասորերեն բնագիրը տե՛ս **Bedjan and Brock**, *Homilies*, vol. 3, p. 687-710: Հայերեն բնագիրը տե՛ս «Սրբոյն Յակոբայ Սրնոյ եպիսկոպոսին, ասացեալ բան ներբողական Ս. Կարապետին եւ Մկրտչին Յովհաննոս», *Արարատ* 21, 1888, էջ 271-283, ասորերեն և հայերեն բնագրերի առաջին երեք երկտողերի թարգմանությունը (և համեմատությունը) տե՛ս **Mathews**, “Jacob of Serugh,” p. 139-40:

⁶⁵ Տե՛ս վերը: Ավելի քան տասնհինգ ձեռագիր, որոնցից մի քանիսն այժմ կորած են, պարունակում են այս թարգմանությունը: Դրանցից ամենաուշը թվագրվում է ԺԸ. դարով:

- Նոր Կիրակիի և Թովմաս առաքյալի մասին ճառը (1.7, մինչև 1194 թ.),
- Հիսուսի՝ Տանարին ընծայման մասին ճառը (1.14, մինչև 1194 թ.),
- Տիրոջ Հարության և գերեզմանը հսկող զինվորների մասին ճառը (1.15, մինչև 1194 թ.),
- Անտիոք ֆաղափ դարձի մասին ճառը (1.17, մինչև 1194 թ.),
- Հովհաննես Մկրտչին նվիրված ներբողը (1.6),
- Մարիամ Աստվածածնի ննջմանը նվիրված ճառը (1.8):

Յոթ այլ թարգմանություններ կարելի է թվագրել ամենաուշը ժ.Գ. դարով՝

- Ադդէի և Աբգարի մասին ճառը (1.9, 1246 թ.),
- Հին Կտակարանում մեր Տիրոջ խորհրդանիշերի մասին ճառը (1.4, մինչև 1271 թ.՝ Վարդան Արևելցու մահը)* – Ճառ նոյնոյ Յակոբայ Սրնեցոյ՝ ասացեալ Յաղագս հին խորհրդոց եւ օրինակաց Տեառն մերոյ, որ ի մարգարէսն եւ ի նահապետսն գուշակեցաւ Հոգւովն Սրբով,
- Ստեփանոս Նախավկայի մասին ճառը (1.11, մինչև 1278 թ.),
- Ծաղկազարդի մասին ճառը (1.13, մինչև 1278 թ.),
- Ղազարոսի հարության մասին ճառը (1.2),
- Մեր Աստծո՝ Քրիստոսի ծննդյան մասին ճառը (1.10, ձեռագիրը թվագրվում է ժ.Բ. կամ ժ.Գ. դարերով),
- Մեկնություն Մեր Փրկչի Հարության մասին ճառը (1.1, ձեռագիրը թվագրվում է ժ.Բ. կամ ժ.Գ. դարերով):

Այս յոթից միայն հինգն են վկայված ժ.Գ. դարի ձեռագրերում: Ստեփանոս Նախավկայի (1.11) և Ծաղկազարդի (1.13) մասին ճառերը պետք է թարգմանված լինեն մինչև 1278 թ., քանի որ դրանց թվագրված հնագույն վկայությունը ՄՄ 995 ձեռագիրն է: Քանի որ երկուսն էլ սխալմամբ վերագրվում են Եփրեմին (կամ առնվազն առաջինը հետևողականորեն է վերագրվում Եփրեմին), ուստի հնարավոր է, որ այս թարգմանությունները թվագրվեն Գրիգոր Բ. Վկայասերի կաթողիկոսության տարիներով⁶⁶: Թեև Ադդէի և Աբգարի (1.9) և Հին Կտակարա-

* Հաջորդող խորագիրը եւս մեր հավելումն է:

⁶⁶ Եթե ճիշտ է Բեռնար Ուտիեի կասկածը՝ որ Հովհաննես Մկրտչին նվիրված այս ճառը (2.7), որը հայերենում վկայված է միայն Եփրեմի անվամբ և որի թարգմանությունը վերագրվում է Գրիգոր Բ. Վկայասերին (1066-1105), իսկապես Հակոբի կորսված հատի թարգմանությունն է, ապա այս երկու թարգմանությունները ևս կարող են վերագրվել Գրիգոր Վկայասերին: Բացի այդ, Գրիգորի հետաքրքրությունը Եփրեմի և նրա գրվածքների հանդեպ երևում է ոչ միայն Եփրեմին վերագրող՝ Հովհաննես Մկրտչի այս հատի առիթով, այլև նրանից, որ նա պատվիրել է Եփրեմի վարքի թարգմանությունը, տե՛ս *Lévon Tér-Petrossian, Textes arméniens relatifs à s. Éphrem* (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 473: Scriptores

նում մեր Տիրոջ խորհրդանիշերի մասին (1.4) ճառերի թարգմանությունները վկայված չեն ԺԲ. կամ ԺԳ. դարերի ձեռագրերով, սակայն սրանք կարող են ավելի որոշակի թվագրվել՝ նրանց հիշատակարաններում Վարդան Արևելցու (մահ. 1271) անվան հիշատակության շնորհիվ⁶⁷: Առաջինը թվագրվում է 1246 թվականով՝ այն նույն տարիով, երբ Վարդանը և ասորի ուղղափառ Յեշու քահանան ավարտի հասցրին Միքայել Ասորու Ժամանակագրության առաջին թարգմանությունը⁶⁸: Ազգէի և Աբգարի (1.9) մասին Հակոբի ճառի թարգմանությունը կից հիշատակարանի համաձայն՝ այն պատվիրել է Վարդանը, թարգմանել՝ Շմոն անունով մեկ այլ ասորի ուղղափառ քահանա⁶⁹: Մեկ այլ հիշատակարան հայտնում է, որ Վարդանը թարգմանել է Հին Կտակարանում մեր Տիրոջ խորհրդանիշերի մասին ճառը (1.4)⁷⁰ և Հակոբի մի քանի այլ՝ անորոշ գրվածքներ, հավանաբար՝ այլ ճառեր: Հակոբի գրվածքների նկատմամբ Վարդան Արևելցու անսպասելի հետաքրքրությունը վկայում է այն մասին, որ ասորի ուղղափառ պատրիարք Իգնատիոս Բ.-ի (1222-52) կողմից Մելիտենեի վանքի գրադարանից Կոստանդին Ա կաթողիկոսի (1221-67) նստավայր Հռոմկա բերված ձեռագրերի շարքում եղել է ոչ միայն Միքայելի Ժա-

Armeniacci, tomus 15), Lovanii, in Aedibus E. Peeters, 1985, և թարգմանությունը՝ Bernard Outtier, Textes arméniens relatifs à s. Éphrem (CSCO 474), Leuven: Peeters, 1985. դրսևսին տե՛ս Sebastian **P. Brock**, “The Armenian Translation of the Syriac Life of St Ephrem and Its Syriac Source,” in *Reflections on Armenia and the Christian Orient: Studies in Honour of Vrej Nersessian*, ed. **Christiane Esche-Ramshorn**, Yerevan: Ankyunacar, 2017, p. 119-130.

⁶⁷ **Mathews**, “Jacob of Serugh”, p. 160.

⁶⁸ **Andrea Schmidt**, “The Armenian Versions I and II of Michael the Syrian,” *Hugoye* 16, 2013, pp. 93-128; **Andrea Schmidt**, “Die zweifache armenische Rezension der syrischen Chronik Michaels des Großen,” *Le Muséon* 109, 1996, pp. 299-319; **Andrea Schmidt**, “Syrische Tradition in armenischer Adaption. Die armenische Rezeption des Geschichtswerks von Michael Syrus und der antichalcedonische Judenbrief an Kaiser Markianos,” in *Symposium Syriacum VII: Uppsala University, Department of Asian and African Languages, 11-14 August 1996*, ed. **René Lavenant** (Orientalia Christiania Analecta 256), Rome: Pontificio instituto orientale, 1998, pp. 359-371; **Andy Hilken**, “Sons of Magog or Thorgomians? The description of the Turks (Book XIV) in Michael’s Chronicle and its Armenian adaptations,” in *Syriac Encounters. Papers from the Sixth North American Syriac Symposium, Duke University, 26-29 June 2011*, ed. **Maria Doerfler, Emmanuel Fiano and Kyle Smith** (Eastern Christian Studies 20), Leuven: Peeters, 2015, pp. 367-379.

⁶⁹ Հայերեն թարգմանությունը պահպանվել է միայն մեկ ձեռագրում՝ եղմ. 1365, էջ 83-131. տե՛ս **Նորայր Պողարեն**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. Դ., Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1969, էջ 644: Ասորերեն հառի առաջին հրատարակությունը տե՛ս **Akharrass and Syriany**, 160 *Unpublished Homilies*, vol. 1, p. 249-261:

⁷⁰ Հայերեն թարգմանությունը պահպանվել է ԺԳ-ԺԸ. դարերով թվագրվող վեց ձեռագրում: Պարզ («ղիպյումատիկ») հրատարակությունը տե՛ս **Գիրք եւ ճառ հոգեշահ**, էջ 371-387: Ասորերեն բնագրի հրատարակությունն այս է **Akharrass and Syriany**, 160 *Unpublished Homilies*, vol. 1, p. 121-127:

մանակագրության ինքնագիրը, այլև, հավանաբար, Հակոբի ճառերի մի ժողովածու, որի մի ընտրանի թարգմանվել է հայերենի⁷¹։ Յավոք, Վարդանի միջավայրի այս երկու թարգմանություններից ոչ մեկը մեծ պահանջարկ չի ունեցել, կամ, առնվազն, մեծ քանակի օրինակություններով չեն պահպանվել։ Ադգէին և Աբգարին նվիրված ճառի թարգմանությունը վկայված է միայն մեկ ձեռագրով, իսկ Հին Կտակարանում մեր Տիրոջ խորհրդանշների մասին ճառի թարգմանությունը՝ միայն վեցում, որոնցից ամենահինը թվագրված է ԺԻ. դարով։

Եզրակացություն

Մենք միայն սկսել ենք տեսնել Կիլիկյան շրջանի հայերեն թարգմանական շարժման մակերեսը՝ հատկապես ասորերեն բնագրերի թարգմանության առումով⁷²։ Նույնիսկ եփրեմի և Հակոբի նման բարձր գնահատված հեղինակների հայերեն թարգմանությունները համեմատաբար քիչ ուշադրության են արժանացել ոչ հայկական գիտական շրջանակներում, չհաշված մի քանի հազվագեղ բացառությունները։ Ձեռագրական վկայությունների քննությունը խոստովանալից է հայ-ասորական մատենագական աղբյուրների ապագայի տեսանկյունից։ Այն ցույց է տալիս Հակոբի և նրա գրվածքների նկատմամբ հայոց մեջ առկա մեծ հետաքրքրությունը՝ սկսած ամենաուշը ԺԲ. դարից, մինչև ԺԹ. դար, երբ դեռևս Հակոբի ճառերի թարգմանություններ պարունակող ձեռագրեր էին ընդօրինակվում։ Ավելին, առանձնահատուկ կարևոր քայլ էր ԺԵ. դարի սկզբին Հակոբի վարքի ներմուծումը Գրիգոր Խլաթեցու կազմած հայերեն Հայսմա-վուրքի մեջ⁷³։

Մինչ այժմ հայտնաբերվել է Հակոբի ճառերի տասնյոթ հայերեն թարգմանություն, ևս ութը ասորերենում չեն պահպանվել⁷⁴։ Այս բնագրերը պարզելու, հրատարակելու, թարգմանելու և ուսումնասիրելու խնդիրը երկար ժամանակ է պահանջում։ Այժմ մենք նույնիսկ տարրական պատկերացում չունենք, թե ինչ եղանակով են թարգմանվել այդ բնագրերը։ Սկսվածքների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանցից շատերը բավական բառացի թարգմանություններ են, սակայն որոշ բնագրեր թարգմանվել են ավելի ազատ։ Միայն ավելի

⁷¹ Schmidt, “Zweifache Armenische Rezension,” 305. Այս վանքի գրադարանի մասին տե՛ս Muriel Debié, “Livres et monastères en Syrie-Mesopotamie d’après les sources syriaques,” in *Le monachisme syriaque*, ed. Florence Jullien (Études syriaques 7), Paris: Geuthner, 2010, p. 156:

⁷² Ցանկը տե՛ս Mathews, “Syriac into Armenian,” p. 33:

⁷³ Շուտով լույս է տեսնելու հրատարակությունն ու թարգմանությունը Վարբի, որը, ըստ երևույթի, շարադրված է ըստ Միֆայել Ասուրու «Ժամանակագրության» հայերեն տարբերակներից մեկի տեղեկությունների:

⁷⁴ Տե՛ս Հավելվածը:

մանրամասն ուսումնասիրությունը կարող է հաստատել այս նախնական դիտարկումները: Հնարավոր է որոշ բնագրեր թարգմանված լինեն մեկից ավելի անգամ (կրկնակի թարգմանություններ). կան վերաթարգմանություններ կամ թարգմանություններ, որոնք վերամշակվել կամ կրճատվել են⁷⁵:

Հավելված: Հակոբ Սրնեցու հայերեն թարգմանությունների նորագված ցանկ

1. Ասորերեն բնագրերով պահպանված.

1. Մեկնություն մեր Փրկչի Հարության մասին հառը (= Մեթյուս 1.1),
2. Ղազարոսի հարության մասին հառը (= Մեթյուս 1.2),
3. Համբարձման մասին հառը (= Մեթյուս 1.3),
4. Հին Կտակարանում մեր Տիրոջ խորհրդանիշերի մասին հառը (= Մեթյուս 1.4),
5. Բեթղեհեմի աստղի մասին հառը (= Մեթյուս 1.5),
6. Նեպոլո Հովհաննես Մկրտչին (= Մեթյուս 1.6),
7. Նոր Կիրակիի և Թովմաս առաքյալի մասին հառը (= Մեթյուս 1.7),
8. Տիրամոր ննջման մասին հառը (= Մեթյուս 1.8),
9. Թադեոս առաքյալի և Հայոց ու Ասորոց արքա Աբգարի մասին հառը (= Մեթյուս 1.9),
10. Մեր Աստծո՝ Քրիստոսի ծննդյան մասին հառը (= Մեթյուս 1.10),
11. Ստեփանոս Նախավկայի մասին հառը (Կեղծ-Եփրեմ),
12. Հինգ ֆանթարի մասին հառը,
13. Ծաղկազարդի մասին հառը,
14. Հիսուսի՝ Տանարին ընծայման մասին հառը (Կեղծ-Եփրեմ),
15. Տիրոջ Հարության և գերեզմանը հսկող զինվորների մասին հառը (= Մեթյուս 2.4),
16. Խորանի խորհրդի մասին հառը (= Մեթյուս 2.5),
17. Անտիոք ֆաղափի դարձի մասին հառը (= Մեթյուս 2.7):

2. Ասորերեն բնագրերը չպահպանված.

1. Ավագ Ուրբաթի մասին հառը (= Մեթյուս 2.1),
2. Անտիոքի մասին հառը (= Մեթյուս 2.2),
3. Սուրբ Կույսի փառաբանման հառը (= Մեթյուս 2.3),

⁷⁵ Վերաթարգմանությունների և կրկնակի թարգմանությունների միջև այս տարբերակումը ես փոխ եմ առնում հետևյալից՝ Dieter Stern, “Slavonic Double Translations of Byzantine hagiographical texts: the Life of St Eupraxia,” *Cyrrillomethodianum* 21, 2016, p. 21-51:

4. Նինվեցիների մասին ճառը (= Մեթյուս 2.6),
5. Հովհաննես Մկրտչին նվիրված ճառը,
6. Կիրակի օրվա խորհրդին նվիրված ճառը,
7. Ավագ Ուրբաթի մասին ճառը,
8. Ապաշխարության մասին ճառը⁷⁶ (ՄՄ 1720, ք. 329բ-332ա):

ANDY HILKENS

THE ARMENIAN RECEPTION OF THE HOMILIES OF JACOB OF SERUGH

Key words: Jacob of Serugh, Ephrem the Syrian, Syriac, translation, Cilician period of translations from Syriac, critical text, sermon, miscellanies, Vardan Arewelts'i, Grigor Khlat'ets'i, Synaxarion, diplomatic edition.

We have only begun to scratch the surface of the Cilician Armenian translation movement, especially in the case of translations from Syriac texts.⁷⁷ Even the Armenian reception of authors as highly appreciated as Ephrem and Jacob has received relatively little attention in non-Armenian scholarly circles, aside from a few rare exceptions. An investigation into the manuscript evidence is promising for the future of Syro-Armenian studies. It demonstrates a great interest in Jacob and his writings among the Armenians, starting in the twelfth century at the latest, all the way until the nineteenth century, when manuscripts with translations of Jacob's homilies were still being copied. Furthermore, a particularly important step in the Armenian reception of Jacob was the integration of a Life of Jacob into the Armenian synaxarion by Gregory of Khlat around the turn of the fifteenth century.⁷⁸

Seventeen Armenian translations of homilies by Jacob have been identified so far, eight others are not extant in Syriac.⁷⁹ The task of identifying, editing, translating and studying these texts will be a long-term process. At the moment, we even lack a basic understanding of the way in which these texts were translated. A comparison of the incipits suggests that many are fairly literal translations, but some texts were translated rather freely. Only a more detailed study will confirm these preliminary

⁷⁶ Այս բնագիրը վերագրվում է Հակոբայ եպիսկոպոսի Սրճոյ Ասորոց վարդապետի, բայց նրա բնույթը դեռևս պետք է հստակել:

⁷⁷ See the impressive list in Mathews, "Syriac into Armenian," 33.

⁷⁸ An edition and translation of this Life, which appears to have been constructed from information from one of the Armenian versions of the Chronicle of Michael the Great, is forthcoming.

⁷⁹ See appendix.

observations. It may be that certain texts were translated more than once (double translations), that there are retranslations or that translations were reworked or abbreviated.⁸⁰

ЭНДИ ХИЛЬКЕНС

АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ РЕЧЕЙ ИАКОВА СЕРУГСКОГО

Ключевые слова: Иаков Серугский, Ефрем Сирин, сирийский, перевод, Киликийский период переводов с сирийского, критический текст, Вардан Аревелци, Григор Хлатеци, Синаксарий, речи, сборники, дишломатическое издание.

Изучение армянского переводческого движения киликийского периода, в особенности в области переводов сирийских текстов, лишь только начинается. Даже армянская рецепция таких высоко чтимых авторов, как Ефрем Сирин или Иаков Серугский, за незначительными исключениями, привлекала сравнительно мало внимания в неарменоведческих научных кругах. Изучение рукописных свидетельств убеждает в большом интересе армян к Иакову и его трудам: он начинается самое позднее с XII в. и не затухает вплоть до XIX в., когда все еще переписывались рукописи с переводами речей Иакова. Особенно важным шагом в армянской рецепции Иакова было включение жития Иакова в армянский синаксарий Григория Хлатского в самом начале XV века.

В настоящее время идентифицировано семнадцать переводов речей Иакова, сирийские оригиналы еще восьми не сохранились. Идентификация, издание, перевод и изучение этих текстов займет много времени. На данный момент мы даже не понимаем, каким образом эти тексты переводились. Сравнение зачинов подсказывает, что многие переводы довольно дословны, однако некоторые тексты переводились скорее свободно. Лишь более подробное исследование подтвердит эти предварительные наблюдения. Может оказаться, что некоторые тексты переводились более одного раза (двойные переводы), что существовали заново переведенные тексты или же переводы были переработаны либо сокращены⁸¹.

⁸⁰ I borrow this distinction between retranslations and double translations from **Dieter Stern**, "Slavonic Double Translations of Byzantine hagiographical texts: the Life of St Eupraxia," *Cyrrillomethodianum* 21, 2016, 21-51.

⁸¹ Я заимствую разграничение между заново переведенными текстами и двойными переводами из следующей статьи: **Dieter Stern**, "Slavonic Double Translations of Byzantine hagiographical texts: the Life of St Eupraxia," *Cyrrillomethodianum* 21, 2016, 21-51.